ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

«ԵՔ-ԷԱՃԾՁԲ-19/19» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի արտահերթ նիստի

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Է. Ղազարյանը
Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Գասպարյանը
Հանձնաժողովի քարտուղար՝ Գ. Մուրադյանը
Բացակա՝ Գ. Մարտիրոսյանը

1. Գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին

(Է. Ղազարյան)

1.1 Փաստաթղթերի գնահատման՝

- վայրը՝ Երևանի քաղաքապետարանի վարչական շենք (ք. Երևան, Արգիշտիի փողոց 1), 321 սենյակ.
-օրը՝ 23.01.2019թ.
-ժամը՝ 11:00

1.2 Հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարության գլխավոր քարտուղարի 16.01.2019 թվականի հ. 1/26-1/424-19 գրությունը, որով առաջարկվել է «Գնումների մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիման վրա չկայացած հայտարարել գնման ընթացակարգը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ էլեկտրոնային գնումների համակարգը չի գործել 2019 թվականի հունվարի 11-ից ժամը 18:00-ից մինչև հունվարի 14-ի ժամը 13:00-ն և էլեկտրոնային աճուրդի գնման ընթացակարգերին արդեն իսկ հայտ ներկայացված մասնակիցները՝ 2019 թվականի հունվարի 14-ին ժամը 09:00-ից մինչև 13:00-ն ընկաց ժամանակահատվածում ընթացակարգերի որոշ չափաբաժինների գծով հնարավորություն չեն ունեցել մասնակցել աճուրդներին՝ գնահատող հանձնաժողովը որոշեց վերը նշված օրենքի պահանջի համաձայն գնման ընթացակարգը հայտարարել չկայացած:

Ընդունվել է որոշում՝ կողմ-2 դեմ-0

Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները.

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Է. Ղազարյան

Անդամներ՝ ---------- Ա. Գասպարյան

Քարտուղար՝ ---------- Գ. Մուրադյան